մինչ որ եթէ կկամենան իւրեանց որդիները յաւ դաստիարակվեն՝ պէտք է տան նոցա կամ գիշերօթիկ ուսումնարանը եւ կամ մի օտար ընտանիքի յանձնեն։

Գ. դասարանի դաստիարակի աշխատանքը եւ հոգացողութիւնը ուսումնական տարվան վերջը հարցաքննութեան ժամանակ այն յանգման երեւեցաւ, որ 40 աշակերտներից միայն 7 հոգի չկարողացան յաւ հարցաքննութիւն տալ։

Իսկ գալով միւս դասարաններին, նոքա այնպէս հոգս կտանէին աշակերտների բարոյականութեան եւ զարգացման մասին, որ միշտ շնորհակալութիւն կստանային թէ ծնողներից, թէ աշակերտներից եւ թէ վերատեսչից։ Եւ որպէս զի աշակերտները հաղորդակցութիւն ունենան ուսուցիչների հետ, դասարանից դուրս որոշված էր աշակերտների համար առանձին տեղ, ուր կժողովվէին ուսուցիչները տօն օրերը եւ կկարդային նոցա զանազան շահաւէտ գրքեր. եւ ժամանակ ժամանակ այս ընթերցմունքը կընդմիջվէին աշակերտների երգեցողութեամբ, որոնք կերգէին ազգային երգեր եւ տաղեր։ Աւելացնելու է, որ երբեմն եւս թոյլ աշակերտներին քաջալերելու համար, յաւ աշակերտներին շատ անգամ կգովէին հրապարակաւ ամբողջ դպրոցական հասարակութեան առաջ։

Ս. Տ. Գ.

## ԽՈՐՈՏԸ։

### I

Խորոտը նստած էր միայնակ, գլուխը ածիլած, կնդակ, հագուստը պատառոտած, իւր նիհար թիկների վերայ ծածկած էր հաստ վերարկուն, նա երբեմն աղէտալի ձայն էր բարձրացնում։ Պատահէր ողորմած մարդ, որ կամենար նորան մօտենալ, նա իսկոյն ձեռը կշարժէր և կաղաղակէր կերկերած ձայնով. «անմաքուր եմ, անմաքուր»։

Այդ մարդը առաջ այդպէս չէր, այլ ապրումէր հասարակութեան մէջ, վայելումէր ընտանեկան և ընկերական կեանքի հաճութիւններ Եւ յանկարծ երեւեցան նորանում այդ զարհուրելի ախտինշանները

սկզբունքն աշխատում էր նա հաւատ ընծայել դորան, ինքն իրան յուսադրելով, թէ այդ կարելի է մի որ և իցէ բժշկելի ախտ լինի:

Բայց աւա՜ղ․ ահա աւելի ճիշդ նշաններ հաստատեցին նորա երկիւղները, և նամանաւանդ որ գիտէր, թէ տանը մնալով կարող էր վարակել իւր ընտանիքն ևս:

Ապա գնաց նա իւր ցեղի առաջնորդի մօտ, որը միայն իշխանութիւն ունէր նորան նայելուց յետ վճիռ յայտնելու:

Առաջնորդը յայտնեց թէ երկբայութիւն կայ:

Այդ կնշանակէր թէ դեռ ևս յոյսը կորած չէ, բայց զգուշութեան համար հիւանդը պիտի առանձնանար և քանի մի օր սպասէր, որ տարափոխիկ ախտը չվարակէր ոչ մին իւր ընտանիքի մէջ: Ի՞նչ զարհուրելի օրեր էին այդ օրերը: Ո՞վ կարող էր նկարագրել նորա սրտի տագնապը, որ յոյսի և երկիւղի մէջ տատանվում էր:

Քանի մի օրից յետ երկբայութեան տեղիք չմնաց, ախտը յայտնվեցաւ, որ բորոտութիւն է: Խեղճը իսկոյն հասարակութեան մէջից արտաքսվեցաւ, մարդկանցից բաժանվեցաւ, իւր թանկագին սիրելիներից հեռանալու դատակնիք ստացաւ, այժմ իւր առաջև ունի մի այնպիսի կեանք, որ լի է անտանելի տանջանքներով, միայնակութիւն և վերջապէս զարհուրելի մահ․ ահա այդ մարդի վիճակը:

## II

Գալիլիայում մի մարդ կար, որ մի և նոյն ախտը ունէր և նոյն թշուառ դրութեան մէջ էր, ինչպէս նա, որի համար վերև խօսեցինք, նա նոյնպիսի հագուստով և նոյն առանձին դրութեան մէջ ապրում էր․ յանկարծ լսեց, որ այդ կողմերում շրջում է մի զարմանական մարդ, որի խօսքով բոլոր հիւանդները բժշկվում են, կոյրերը տեսնում են և կաղերը գնում են:

Նա կարող է արդեօք ինձ ևս բժշկել, մտածում էր խեղճը ինքն իրան: Եթէ նա իշխանութիւն ունի բոլոր ախտերի վերայ, ապա անկասկած և իմս վերայ: Գնամ նորա մօտ, նորա առաջն առնեմ, քանի որ նա քաղաքը չէ մտած: Նորան անուանում են Մարգարէ, Փրկիչ․ գիտեմ նորան, ուրիշ մէկը կարող չէ ինձ բժշկել:

Ահա նա տեղից վերկացաւ, կանգնեց ոտի վերայ, նայեց հեռու և տեսաւ, որ բազմութիւնը հեղեղի պէս թափվում է մի կէտի վերայ․

Վարդապետը այնտեղ կլինի անպատճառ, մտածում էր նա։ Իւր վերջին յոյսը ժողոված բորոտը դէպի յառաջ ընթացաւ, յոյսը տալիս էր նորան մի անհամբերութիւն, — նա ձեղքում ճանապարհ, բաց է անում ամբոխի մէջով, կիրկիրանձայն աղաղակելով՝ «անմաքուր եմ անմաքուր»։ Ամենքը յետ են քաշվում ճանապարհ են տալիս, վախենալով որ իրանց չդիպչի, և այսպէս նա արձակ ճանապարհ է ստանում Վարդապետին մօտենալու։ «Եւ ահա բորոտը եկաւ, երկրպագութիւն էր անում Նորան և ասում էր. Տէր, եթէ կամենաս, կարող ես ինձ մաքրել»։ Յիսուս իւր ձեռքը երկարացնելով դիպաւ նորան և ասաց. «Կամենում եմ, մաքրվիր և շուտով նորա բորոտութիւնը մաքրվեցաւ։ (Մատթ. Ը. 2, 3)»։

Մաքրվեցաւ։ Նա փայլ ձգեց բորոտութեան վէրքերուն, նորա երակների մէջ վազում արդէն նոր արիւն, նորա բոլոր կազմուածքի մէջ թափանցում նոր կեանք, նորա ուրախութեան չափ չունի, նա շնչում բաղդաւորութիւն։ Նա կրկին պիտի խառնուի իւր տունը, պիտի վերադառնայ հասարակութեան մէջ, մաքրվեցաւ, արդէն մաքրված է։ Եւ Վարդապետը ասում է նորան. Զգոյշ կաց, մէկին չասես, այլ գնա քեզ քահանային ցոյց տուր, և Մովսէսի պատուիրած ընծան տուր, նոցա վկայութիւն լինելու համար։ (Մատթ. Ը. 4)

«Բայց դուրս գալով սկսեց շատ հրատարակել և բանը տարածել»։ (Մարկ. Ա. 45)։

Նա կարո՞ղ էր լռել և չուրախանալ, որ բոլոր պարգևների լաւագոյնը ստացած էր։ Նա ինչպէս լռէր, երբ որ Փրկիչը դիպաւ նորան, բժշկեց և օրհնեց։ Ոչ, լռելու չէր։ Նա սկսում էր պատմել ամեն մի հարցնողին, թէ ինչ արաւ իրան Յիսուսը և ինչպէս բժշկեց։ Եւ հարիւրաւոր հիւանդներ, երբ որ լսեցին այս հրաշքի մասին, եկան Յիսուսի մօտ և բժշկվեցան ամենքը։

Այս ամենից յետոյ բժշկվածը վազում ուրախ ուրախ քահանայի մօտ և ասում թէ ինքը մաքրված է, որովհետև Վարդապետն այսպէս ասաց։ Ընծան բերելով նա փառաբանում էր Փրկչի սէրը և զօրութիւնը և բարձր ձայնով աղաղակում էր. «Նա բժշկեց ինձ»։

Քահանան տեսնելով որ բորոտութիւնը մաքրված է, ամփոփութեան պէս առաւ երկու ողջ թռչուն և նոցանից մէկի արիւնը թափեց ջրով լի ամանի մէջ և միւսը թաթախեց առաջինի արիւնի

մէջ, այս եօթն անգամ այդ արիւնից սրսկեց բորոտութենից մաքրուած մարդի վերայ, յայտնելով թէ նա մաքրուած է օրէնքով իւր անմաքրութենից և բժշկուած է բորոտութենից։ Իսկ ողջ թռչունը դէպի դաշտն արձակեց (Ղևտ. ԺԴ.)։ Ահա մի հրաշալի օրինակ Յիսուսի մահի և յարութեան, որի ժամը դեռ ևս հասած չէր այն ժամանակ։

III

Աշխարհի մէջ կան և ուրիշ բորոտներ, որոնց մարմնի վերայ թէպէտ բորոտութեան ախտ չէ երևում, բայց նոցա հոգին հիւանդ է բորոտութեամբ և նոցա բարոյական կեանքի ամէն աղբիւրները մահացու թոյնով արատաւորուած են։

Այդ ախտով վարակուած են ամենքը, դու ևս, որ կարդում ես այս տողերը, ես ևս, որ գրում եմ սորան։ Շատ գրքեր են հրատարակուած մարմնի ախտի վերայ, բայց այն գիրքը, որի մէջ եթէ նկարագրուէր մեր հոգևոր հիւանդութիւնները և ախտերը, պիտի մի անպարունակելի գիրք լինէր։

Բարոյական բորոտը յայտնվում է շատ կերպերով և զանազան ձևերով, ոմանց մէջ բարկութեամբ, ուրիշներին հպարտութեամբ, ոմանց — անձնասիրութեամբ, ժլատութեամբ, արբեցութեամբ, նախանձով, բայց սորա հակառակ, ոմանց մէջ նա այնքան փոքր է նկատվում, որ մինչև անգամ հազիւ թէ նշմարելի լինէր։

Այդ բորոտութենից բժշկող ոչ բժիշկ և ոչ դեղ կայ, բայց Քրիստոս, այն «արդարը մեզ անարդարներիս տեղ մեռնողը», Նա որ իւր արիւնով լուաց մեր մեղքերը և յարութիւն առաւ մեզ արդարացնելու համար։ — Նա միայն կարող է բժշկել մեզ այդ ախտից։

Ի՞նչ անելու է որ այդ բժշկութիւնը ստանանք Նորանից։ Այն ինչ որ արաւ բորոտը — խնդրենք Նորան, որ մեզ բժշկէ։ Բորոտը գիտէր որ իւր հիւանդութիւնը մահացու հիւանդութիւն է, և թէ միայն Քրիստոս կարող էր բժշկել նորան։ Նա հաւատով խնդրեց — և խնդրածը ստացաւ։ Մենք ևս պիտի այնպէս անենք։

Ընթերցող, այս տողերը գրողը այնպէս արաւ և հաւատում է, որ մաքրուած է։ Աւետարանում յիշուած բորոտի պէս նա կարող չէ

լուել, նա առուած ձեզ. իմ Փրկիչ Յիսուսը կենդանի է, Նա իւր վերայ առաւ իմ մեղքերը և կրեց իմ պատիժը: «Նա մեր մեղքերի համար վիրաւորվեցաւ և մեր անօրէնութեան համար ծեծվեցաւ, մեր խաղաղութեան պատիժը Նորա վերայ եղաւ և Նորա վէրքերով մենք բժշկվեցանք»: (Եսա. ԾԳ. 5):

Այս բանիս մէջ Աստուծու սէրը մեր վերայ յայտնի եղաւ, որ Աստուած իւր միածին Որդին աշխարհ ուղարկեց, որ Նորա միջոցով ապրենք: Այս բանիս մէջ է սէրը, որ չէ թէ մենք սիրեցինք Աստուած, հապա որ Նա մեզ սիրեց և իւր Որդին ուղարկեց մեր մեղքերին քաւութիւն լինելու»: (Ա. Յով. Դ. 9, 10):

«Ողորմութիւնը և ճշմարտութիւնը միմեանց պատահեցան, արդարութիւնը և խաղաղութիւնը միմեանց համբուրեցին»: (Սաղ. ՁԴ. 10):

Եկէք այժմ Փրկչի մօտ, մօտեցէք Նորան ձեր ամեն բարոյական հիւանդութիւններով, թէ ծածուկ և թէ յայտնի ախտերով և հաւատով բժշկութիւն կգտնէք:

Նա ասաց. «Նա որ ինձ մօտ կգայ, բնաւ դուրս պիտի չհանեմ»: (Յով. Զ. 37):

Մի անգամ պիտի մաքրվէք և ձեր գործերը մաքրված պիտի լինին, որով ճշմարտութեան Հոգին ձեր մէջ կբնակի:

Ա. Վ.

---

## ԽՐԱԽՈՅՍ ՃՇՄԱՐՏԱՍԷՐԻՆ.

Թող պատրաստէ քեզ տըգէտ ամբոխը,
Թող քեզ անիծէ ու հալածէ նա.
Դու ճշմարտութեան սուր զէնքը ձեռիդ
Անահ, աներկիւղ միշտ յառաջ գընա:
Թող խաւարամիտ ցածոգի անձինք
Քարք ու ծանակներ թափեն քո վերայ.
Դու ճշմարտութեան սուր զէնքը ձեռիդ
Ճեղքիր խաւարը ու յառաջ գընա:
Թող զըրպարտեն քեզ սուտ դիմակ մարդիկ,